ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 1 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Կարապետ Հաջիյանը 12.10.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241^2 հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

Դատական կազմը նշում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներում նախատեսված են սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձեւական պահանջներ, իսկ

որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս պահանջը դիմողը չի պահպանել, ավելին, նա ընդհանրապես որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ:

Դիմումի եւ դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241^2 հոդվածի դրույթի սահմանադրականությունը, ձեւականորեն առաջ քաշելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության խնդիրը: Ուստի, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ՝ դատական կազմը գտնում է, որ դիմումի քննությունը ենթակա է մերժման՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 նոյեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-30